«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարիտա Հովիկի Մանուկյան

Ուսումնական հաստատություն՝ Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……..…….....…..3

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա.....……4

Ուսուցչի դերը համգործակցային ուսուցման մեջ…….5

Համագործակցային ուսուցման սոցիալական արդյունքները.....…7

Համագործակցային ուսուցման կրթական առավելությունները.....8

Համագործակցային ուսուցման տարրերը…….....……..…..9

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները…….....…….10

Խմբերի ձևավորման սկզբունքները…….....……...…...12

Եզրակացություն…….....……...…...14

Օգտագործված գրականություն.....…….....…15

Ներածություն

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի:

Փորձը ցույց է տվել, որ համագործակցային դասերն ավելի արդյունավետ են: Այդ ընթացքում ստեղծվում են աջակցող և փոխադարձաբար նվիրված հարաբերություններ, բանիմացության և ինքնարժևորման առավել բարձր աստիճաններ: Համագործակցային ուսուցումը երեխաներին մղում է ավելի լավ սովորել, քանի որ «Երբ սովորեցնում ես, սովորում ես կրկնակի»:

Համագործակցային ուսուցման կիրառումը նպաստում է ուսման արդյունավետության բարձրացմանը: Ուսուցման ժամանակ աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ուսուցչի օգնությամբ, այլև ինքնուրույնաբար: Աշակերտն այս դեպքում պասիվ ընկալողից վերաճում է հայտնագործողի և գիտելիքների ձեռք բերման ակտիվ մասնակցի: Աշակերտները զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդրի լուծման, թեմայի հետազոտման կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու ուղղությամբ: Խմբերում ընդգրկված տարբեր կարողությունների և մտածողության տեր աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է իր տեսակետը, միաժամանակ ծանոթանում մյուսների մտքերին: Այս դեպքում նրանք սովորեցնում են իրար և սովորում միմյանցից:

Համագործակցային ուսուցումը խմբերով, ինքնուրույն, անհատական ու շերտավորված աշխատանքների մի կուռ համակարգ է: Այն ընդգրկում է զրույցի, խնդրահարույց ուսուցման և փոխներգործուն մեթոդների տարրեր:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության նրկայացուցիչները (Կուրտ-Կաֆկա, Կուրտ-Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում՝ գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե *ինչ* սովորելու, այլ *ինչպես* սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր երկարատև պատմությանը, այն չի գտել լայն կիրառություն: Այդ ամենի պատճառը սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության բացակայումը չէ:

Համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենասիրված ոլորտներից է: Կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն ոչ բոլորն են կարողանում ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրել դասընթացում: Այդ պատճառով էլ համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում տարրական դպրոցում, և դասարանում անցկացվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Ուսուցչի դերը ամենից կարևորվող, մեծ հնարամտություն պահանջող, օր օրի ավելի գնահատվող մասնագիտություններից է: Հաջողությունների հասնելու համար ուսուցիչներին անհրաժեշտ են երեխաներին կառավարելու նոր եղանակներ:

Երբեմն սովորելն ու սովորեցնելը միշտ չէ, որ զուգահեռ են ընթանում: Դասագրքերում գրված նյութերի բովանդակությունը պատմելը կամ կարդալը դեռ սովորել չէ: Ինչպես նաև կարդացածը մտապահելը կամ անգիր անելը սովորել չէ:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող ակտիվ և բարդ գործընթաց է: Ուսուցիչը կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր: Համագործակցային մեթոդներն անկնկալում են ուսուցչի դերի փոփոխություն: Այն նման է առաջնորդի դերի, որն ուղղորդում է դասարանը և ստեղծում փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերածվում է աջակցողի և դիտարկողի: Հաճան թվում է, թե համագործակցային ուսուցումն օգտագործող ուսուցիչը ավելի քիչ է աշխատում, քան ավանդական մեթոդով աշխատող ուսուցիչը, քանի որ ուսուցման ժամանակի նշանակալի մասը նվիրվում է աշակերտների սովորելուն իրենց ընկերներից: Սակայն իրականում դա այդպես չէ, համագործակցային ուսուցումն օգտագործող ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պատրականություններ, որոնց մեջ մտնում են.

- դասերի, վարժությունների պլանավորում և զարգացում,
- սովորողների խմբերի կազմում,
- սովորողների տեղաբաշխում,
- սովորողներին առաջադրանքի ներկայացում և բացատրում,
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն,
- սովորողներին օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում,
- գնահատում:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ են ժամանակ միմյան հետ ազատ զգալու համար: Խմբերից ժամանակ կպահանջվի նաև մտքեր փոխանակելու համար: Ավանդական մեթոդով աշխատող ուսուցչի համար հիմնականում այդ հանգամանքը չեն կարևորում: Դա չի նշանակում, որ ուսուցիչը պիտի սպասի մինչև ամենադանդաղ խումբն ավարտի քննարկումը: Ընդհակառակը, ուսուցիչը պետք է բոլոր խմբերի աշխատանքի տևողությունը կանոնակարգի հրահանգով:

Շատ ուսուցիչների համար համագործակցային ուսուցման մեջ ամենադժվարը ինքնավերահսկողությունն է՝ աշակերտներին իրենց սեփական հայտնագործությունները կատարելու և սեփական խնդիրները լուծելու համար հնարավորություններ ստեղծելու ընթացքում: Որոշ ուսուցիչներ միջամտում են, երբ աշակերտները համաձայն չեն միմյանց հետ: Ուսուցիչ միջամտությունը կարող է լինել միայն վերջում:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության հասնելու պայմանը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի բովանդակային մոտեցումը, աշակերտների գործողությունը գնահատումը: Ժամանակի բաշխումը նույնպես կարևոր է համագործակցային ուսուցման արդյունավետության համար: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ուսուցիչը մեծ դեր ունի համագործակցային ուսուցման կազմակերպման գործընթացում:

Համագործակցային ուսուցման սոցիալական արդյունքները

Համագործակցային ուսուցման կարևոր հետևանքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն են: Մարդկանց հետ շփվելու արդյունքում, մենք ավելի լավ ենք հասկանում ինքներս մեզ: Այն մարդիկ, որոնց ներանձնային հմտությունները զարգացած չեն, թյուր փոխհարաբերություններ ունեն շրջապատի հետ և հակված են իրենց մասին կազմել ոչ ճիշտ կարծիք դժվարանում են համագործակցել: Դրական ինքնագնահատական ունեցող մարդն ավելի հեշտ է համագործակցում: Կյանքի որակը համագործակցային ուսուցման այլ կարևոր արդյունք է, քանի որ բոլորն էլ կարիք ունեն արդյունավետ փոխահարաբերությունների: Դրա համար կարևոր է ինքնագնահատականը, դիտարկումներ կատարելը, արդյունավետ հաղորդակցվելը և համագործակցել կարողանալը: Մարդկանց հետ դրական և աջակցող փոխհարաբերությունները մեծ ազդեցություն ունեն նաև հոգեբանական առողջության վրա: Այդպիսի փոխհարաբերություններ ստեղծելու անկարողությունը երբեմն առաջացնում է տագնապ, հուսահատություն: Ապացուցված է, որ մարդկանց հետ դրական փոխհարաբերություններ կառուցելու ունակությունը նվազեցնում է հոգեբանական սթրեսը: Համագործակցային ուսուցման կարևոր հետևանք է նաև սթրեսի հաղթահարման ունակությունը: Աջակցող փոխհարաբերությունների դեպքում նվազում է սթրեսային իրավիճակների թիվը,

պակասում է տագնապը: Նման փոխհարաբերությունները օգնում են հաղթահարել սթրեսը: Դրական փոխհարաբերությունները նպաստավոր պայման են նաև ֆիզիկական առողջության համար: Համագործակցային ուսուցումը հնարավորություն է տալիս բացահայտել անձի հակումները և մասնագիտական կողմնորոշումը:

Համագործակցային ուսուցման կրթական առավելությունները

Համագոծակցային ուսուցումը ունի հիմնարար առավելություններ:

Առաջին ՝ այն մղում է աշակերտներին ավելի լավ սովորելու: Բոլոր աշակերտների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որում նրանք կարողանում են արտահայտել իրենց ուժեղ կողմերը: Որոշ մասնագետներ կարծում են, որ համագործակցային ուսուցման պարագայում դասարաննորում ընդունակ աշակերտները պարտավորված են մշտապես սովորեցնելու մյուսներին, ինչի պատճառով նրանց առաջընթացը դանդաղում է: Սակայն այս կարծիքը ընդունելի չէ, քանի որ մարդը ամենաշատը սովորում է սովորեցնելիս:

Երկրորդ ՝ գիտելիքներից զատ դպրոցի համար կարևոր է տարբեր կարողություններ ու բնավորության գծեր ունեցող աշակերտների հետ հաղորդակցվելու հմտությունները: Այս ճանապարհով էլ դպրոցը դառնում է հասարակության մոդելը:

Երրորդ ՝ այն խրախուսում է ուսուցիչների համագործակցությունը: Հայաստանում ուսուցիչները սովոր են միայնակ աշխատելու, ինչն արդյունավետ չէ: Համագործակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը, այլև՝ ուսուցիչ-ուսուցիչ համագործակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները ավելի հեշտ են հարմարվում համագործակցային ուսուցման աշխատառճին, քան ուսուցիչները: Մինչդեռ համագործակցային ուսուցման մեջ կարևոր է ուսուցիչների համագործակցությունը:

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ դեպքերում ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում:

Առաջադրանքը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Համագործակցային ուսուցման տարրերն են.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթաց,
- փոխներգործուն / ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը: Համագործակցային ուսուցման տարրերի անընդհատ օգտագործման արդյունքում խմբերը կարող են հասնել համագործակցության բարձր մակարդակի:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

Համագործակցային ուսուցում կազմակերպելու նպատակով ստեղծված խմբերը դասակարգվում են ըստ հետևյալ տեսակների.

Համագործակցային ֆորմալ խմբեր – Խմբի անդամները համատեղ նպատակների իրականացման համար աշխատում են միասին մեկ կամ մի քանի դասաժամի ընթացքում:

Համագործակցային ոչ ֆորմալ խմբեր – Խմբի անդամները համատեղ նպատակին հասնելու համար աշխատում են ժամանակավոր խմբերում՝ ընդամենը մեկ քննարկման կամ մեկ դասաժամի համար:

Հենակետային համագործակցային խմբեր – Կայուն և երկարաժամկետ խմբեր են, որոնք գործում են մեկ կիսամյակի կամ ուսումնական տարվա ընթացքում, որոնց առաջնային նպատակն է խմբի յուրաքանչյուր անդամին աջակցելն ու խրախուսելը և գիտելիքների ձեռք բերման գործում առաջընթաց ապահովելը:

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր: Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը կարող են գործել մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ և իրականացնել որևէ առաջադրանք: Յուրաքանչյուր աշակերտ ունի երկու պարտականություն. առավելագույնի հասցնել սեփական և խմբի յուրաքանչյուր անդամի ուսումնական արդյունավետությունը: Ֆրոնտալ խմբերի աշխատանքը կազմակերպելու նպատակով ուսուցիչը կատարում է հետևյալ քայլերը.

- ✓ ներկայացնում է առաջադրանքի նպատակները,
- ✓ կայացնում է որոշումներ,
- ✓ բացատրում է առաջադրանքը,
- ✓ դիտարկում է խմբի աշխատանքը,
- ✓ գնահատում է աշակերտների սովորածը և օգնում քննարկել, թե որքանով են արդյունավետ աշխատել խմբերը:

Աշակերտները պետք է համագործակցեն իրենց խմբի անդամների հետ, կիսվեն գաղափարներով, աջակցեն միմյանց: Գնահատումը իրականացվում է չափանիշներին համապատասխան:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր: Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնց գործունեությունը կարող է տևել մի քանի րոպեից մինչև մեկ դասաժամի ավարտը: Այս խմբերը կարող են օգտագործվել դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման կամ ֆիլմեր դիտելու ժամանակ աշակերտների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնցանելու, ուսուցման ընթացքում համապատասխան տրամադրություն ստեղծելու, դասի ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար: Ոչ ֆորմալ խմբերը հաճախ այնպես են ձևավորվում, որ աշակերտները ներգրավվում են երեքից հինգ րոպե տևողությամբ քննարկումներում՝ նախքան դասախոսությունը և դրանից հետո, իսկ դասախոսության ընթացքում՝ իրենց կողքին նստած աշակերտների հետ երկու-երեք րոպե տևողությամբ քննարկումներում: Ուսուցիչ դերը այս խմբերի աշխատանքները կազմակերպելու գործում հետևյալն է.

- ✓ կազմակերպել ներածական քննարկումներ,
- ✓ կազմակերպել խմբային քննարկումներ,
- ✓ ամփոփել քննարկումները:

Ուսուցման ընթացքում ուսուցչի համար դժվարություն է առաջանում աշակերտների կողմից նյութի ներկայացման հարցերում: Այս դժվարությունները հաղթահարվում են ուսուցչի ցուցումների օգնությամբ:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր: Համագործակցային հենակետյաին խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ ծրագրի ընթացքում: Խմբերի անդամները միմյանց աջակցում են, օգնում և խրախուսում նպաստելով առաջադրանքի կատարմանը: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, տնային հանձնարարությունները կատարելու հարցում օգնելը և այլն: Հենակետային խմբերն ունեն անձնական պատասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամին, երբ նա ունի անձնական բնույթի խնդիրներ: Որքան մեծ է դասարանը և բարդ ու դժվար է առարկան, այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալը:

Հենակետային խմբերը ուսուցչի կողմից ձևավորվում են նախապես խմբի անդամներին ուսումնասիրելուց հետո:

Խմբերի ձևավորման սկզբունքները

Համագործակցային խմբերը ձևավորվում են մի քանի եղանակով.

Համասեռ.

Համասեռ խմբում ընդգրկված անդամների աշխատանքային կարողությունները համազոր են: Այս տիպի խմբերում աշխատելիս աշակերտները նույն կարողությունների տեր անդամների հետ շփվելով իրենց ավելի հարմարավետ են զգում, աշխատանքը ավելի հաճելի է համազոր կարողությունների տեր անդամների հետ, քան տարբեր կարողություններ ունեցող աշակերտների հետ աշխատելիս, սակայն նրանք ավելի կատարելագործվելու շարժառիթ չեն ունենում:

Պատահական.

Պատահականորեն կազմված խմբերում կարող ենք ունենալ շատ թույլ և շատ ուժեղ խմբեր: Այս դեպքում դժվարանում է դասարանի աշխատանքի կառավարումը:

Ըստ հետաքրքրությունների կամ ինքնակամ.

Երբ աշակերտներն իրենք են ընտրում իրենց խմբի անդամներին, սովորում են նախաձեռնություն հանդես բերել նաև հասարակական իրավիճակներում, իրենց ավելի հարմարավետ են զգում նման խմբերում աշխատելիս: Ինքնակամ ընտրությունն ունի նաև թերություններ.

- բոլորը միշտ նույն անդամներին են ընտրում իրենց խմբում,
- աշակերտներից ոմանք մերժվում են մյուսների կողմից,
- խմբավորված աշակերտները կարող են այլ հետաքրքրություններ ունենալ և շեղվել հանձնարարությունից,
- համեմատաբար դանդաղ աշխատող կամ մերժված երեխաները նույն խմբում են աշխատում և նրանց հետ մնալու հավանականությունը մեծանում է:

Այսպիսի խմբերի նպատակները կարող են չհամընկնել ուսուցչի և ուսուցման նպատակների հետ: Ոչ ինքնակամ խմբվելու դեպքում, ուսուցիչը պետք է բացատրի երեխաներին բոլոր ընկերների հետ աշխատելու անհարժեշտությունն ու կարևորությունը:

Տարասեռ.

Տարասեռ են համարվում այն խմբերը, որոնց անդամները տարբեր՝ ուժեղ, թույլ, միջին կարողությունների տեր աշակերտներ են: Երբ խմբերում հավասարաչափ են բաշխված ուժերը, ուսուցչի համար հեշտանում է նոր նյութի մատուցումը, դասարանի կառավարումը, ինչպես նաև աշակերտների փոխադարձ ուսուցանումը: Մշտապես տարասեռ խմբերով աշխատելն ունի նաև իր բացասական կողմերը, ուժեղ աշակերտները զրկված են միասին աշխատելու և ուժեղ գործընկերոջ ներկայություն զգալու հնարավորությունից, թույլերը միշտ գտնվելով ուժեղների հովանավորության տակ հնարավորություն չեն ունենում առավելագույնս դրսևորելու և առաջնորդության տարրերը սովորելու:

Պատահական կազմված խմբերը պետք է հաճախ փոփոխվեն: Ուսուցչի կողմից կանխամտածված ձևավորված խմբերը կարող են ավելի երկար պահպանվել: Ցանկալի է, որ խմբի կազմը փոքրաթիվ լինի: Տղաներն ու աղջիկները պետք է խմբում հավասար թվով ընդգրկված լինեն: Եթե խմբում միայն մեկ տղա կամ մեկ աղջիկ լինի, նա կհայտնվի ուշադրության կենտրոնում, որը կխոչընդոտի խմբի աշխատանքը:

Եզրակացություն

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ըստ կիրառման եղանակի ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են: Համագործակցային ուսուցման հիմքում տարբեր ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գաղափարն է: Սովորողները միավորվում են խմբերում, նրանց տրվում է առաջադրանք, ընդ որում յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ միայն իր այլև ամբողջ խմբի աշխատանքի համար: Այդ պատճառով էլ ավել թույլ առաջադիմություն ունեցող սովորողները ձգտում են սովորել: Արդյունքում աշխատում է ամբողջ դասարանը, քանի որ առաջադրված խնդրին միասնական լուծում են տալիս:

Համագործակցային ուսուցման հիմնական նպատակը սովորել սովորեցնելն է: Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր գիտելիքների յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր կարևոր է գիտելիքի ընտրությունը, դրա մշակման, յուրացման և կրառման գործնական հմտությունների ձեռքբերումը և կարողությունների զարգացումը: Այն նպաստում է սովորողների արդյունավետ համագործակցության և սովորելու գործընթացը ինքնուրույն կազմակերպելու անհատի կարողությունների զարգացում:

Փորձը ցույց է տվել, որ միասին սովորելը ոչ միայն հեշտ է, մատչելի, այլև հետաքրքիր և նշանակալիորեն արդյունավետ: Փոխօգնությունը, խնդիրների համատեղ լուծումը, հաջողության և անհաջողության կիսումը ձևավորվում է բարոյական բարձր որակներ, որոնք պետք են ոչ միայն դպրոցում, այլև կյանքում: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ուսուցչին հնարավորություն է տալիս ստեղծագործաբար մոտենալ ուսուցման գործընթացին, դասավանդվող առարկային, սովորողներին, նպաստում նրա մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության դրսևորմանը:

Օգտագործված գրականության

1. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ «Համագործակցային ուսուցում» Երևան 2006
2. Համացանց՝ gspi.am

   armedu.am
3. Նախաշավիղ 1. 2010
4. Նախաշավիղ 1-2. 2007